

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ

[պայմանագրի կնքման ամսաթիվ]

[պայմանագրի կնքման վայր]

1. Սույն պայմանագիրը կնքվել է հետևյալ կողմերի միջև՝

1.1. **Կառավարման հիմնադիր՝** Հայաստանի Հանրապետություն, ի դեմս
Հայաստանի Հանրապետության դատախազության, և

1.2. **Հավատարմագրային կառավարիչ՝** *[կառավարչի փոխադրված]*

հետևյալի մասին՝

I. Պայմանագրի առարկան

2. Կառավարման հիմնադրի տիրապետությանն է անցել սույն պայմանագրի
1-ին հավելվածում նկարագրված գույքը (այսուհետ՝ գույք), որի արժեքի պահպանման
համար անհրաժեշտ է ապահովել դրա մասնագիտացված ընթացիկ կառավարում:

3. Սույն պայմանագրի 2-րդ կետում նկարագրված նպատակով կառավարման
հիմնադիրը հավատարմագրային կառավարչին է հանձնում գույքը, իսկ հավատար-
մագրային կառավարիչը պարտավորվում է ի շահ կառավարման հիմնադրի իրակա-
նացնել այդ գույքի կառավարումը՝ համաձայն սույն պայմանագրի 2-րդ հավելվածում
նկարագրված կառավարման ծրագրի:

II. Կառավարման ժամկետները

4. Սույն պայմանագրով գույքը հավատարմագրային կառավարման է հանձնվում
[հավատարմագրային կառավարման ժամկետը]:

5. Կառավարման հիմնադիրը կարող է ցանկացած պահի հրաժարվել պայմանագրից՝ այդ մասին *[օրերի քանակը]* օր առաջ ծանուցելով հավատարմագրային կառավարչին, եթե վերացել է սույն պայմանագրի 2-րդ կետով նախատեսված նպատակը:

6. Պայմանագիրը դադարելու դեպքում հավատարմագրային կառավարիչը *[օրերի քանակը]* օրվա ընթացքում հավատարմագրային կառավարման հանձնված գույքը հանձնման-ընդունման արձանագրությամբ փոխանցում է կառավարման հիմնադրին:

III. Գույքի հանձնումը

7. Սույն պայմանագրի կնքման պահից *[օրերի քանակը]* օրվա ընթացքում կառավարման հիմնադիրը գույքը հանձնում է հավատարմագրային կառավարչին:

8. Գույքի հանձնումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությամբ, որում նշվում են արձանագրության կազմման ամսաթիվը, գույքի գտնվելու վայրը, կազմը և վիճակը հանձնման պահին:

IV. Գույքի կառավարումը

9. Հավատարմագրային կառավարիչն իրավունք ունի իրականացնել գույքի կառավարման առնչությամբ այնպիսի գործողություններ, որոնք բխում են սույն պայմանագրի 2-րդ հավելվածում նկարագրված կառավարման ծրագրից: *[դրամական արժեքը]* գերազանցող արժեքով գործարքները հավատարմագրային կառավարչի կողմից կնքվում են կառավարման հիմնադրի նախնական գրավոր համաձայնությամբ:

10. Գույքի կառավարման ընթացքում ստացված շահույթը ենթակա է տնօրինման սույն պայմանագրի 2-րդ հավելվածում նկարագրված կառավարման ծրագրի կանոններով, իսկ այդպիսի կանոնների բացակայության դեպքում՝ կառավարման հիմնադրի հետ համաձայնեցված եղանակով:

11. Կառավարման հիմնադիրն իրավունք ունի ցանկացած ժամանակ ստուգել հավատարմագրային կառավարչի կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

12. Հավատարմագրային կառավարիչը յուրաքանչյուր ամսվա համար մինչև հաջորդող ամսվա 5-ը կառավարման հիմնադրին ներկայացնում է գույքի կառավարման ուղղությամբ իրականացված միջոցառումների և դրանց արդյունքների վերաբերյալ հաշվետվություն:

13. Եթե կառավարման հիմնադիրը *[ժամանակահատվածի տևողությունը]* ընթացքում չի ընդունում ներկայացված հաշվետվությունը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված, և նշված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը կառավարման հիմնադիրը հավատարմագրային կառավարչին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը: Ծառայությունների ընդունման փաստն ամրագրվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

14. Հավատարմագրային կառավարիչը պարտավոր է չհրապարակել կամ այլ կերպ երրորդ անձանց չփոխանցել գույքի կառավարման ընթացքում իրեն հայտնի դարձած այն տեղեկությունները, որոնք երրորդ անձանց անհայտ լինելու ուժով ունեն իրական կամ հնարավոր առևտրային արժեք, առկա չէ դրանք օրինական հիմքերով ազատորեն ստանալու հնարավորություն, և գույքի վերաբերյալ տեղեկություններ ունեցողը միջոցներ է ձեռնարկում դրա գաղտնիության պահպանման համար:

V. Հավատարմագրային կառավարչի վարձատրությունը

15. Հավատարմագրային կառավարչի վարձատրությունը և իրականացված ծախսերի փոխհատուցումն իրականացվում են *[ժամանակահատվածի տևողությունը]* կտրվածքով՝ հավատարմագրային կառավարչի կողմից ներկայացված հաշիվ-ապրանքագրի հիման վրա:

16. Հավատարմագրային կառավարչի վարձատրության և կառավարման համար անհրաժեշտ ծախսերի (մասին՝ պայմանագրի գին) չափը սահմանվում է սույն պայմանագրի 2-րդ հավելվածում նկարագրված կառավարման ծրագրով:

17. Կառավարման հիմնադրի կողմից ենթակա են փոխհատուցման հավատարմագրային կառավարչի կողմից իրականացված այն ծախսերը, որոնք նախատեսված են սույն պայմանագրի 2-րդ հավելվածում նկարագրված կառավարման ծրագրով կամ նախապես համաձայնեցվել են կառավարման հիմնադրի հետ:

18. Կառավարման հիմնադրի կողմից վարձատրության վճարումը և կրած ծախսերի փոխհատուցումն իրականացվում են հաշիվ-ապրանքագիրն ստանալուց հետո *[ժամկետի տևողությունը]* ընթացքում՝ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում ապահովելով տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը:

19. Սույն պայմանագրի 5-րդ կետով նախատեսված դեպքում կառավարման հիմնադրի կողմից հավատարմագրային կառավարչին վճարվում է մինչև պայմանագրի դադարումն իրականացված գործողությունների վարձատրությունը և կրած ծախսերի փոխհատուցումը, ինչպես նաև *[ժամանակահատվածի տևողությունը]* համար նախատեսված վարձատրությանը համարժեք գումար:

VI. Հավատարմագրային կառավարչի պատասխանատվությունը

20. Հավատարմագրային կառավարչին իր պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար պատասխանատվություն է կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, այդ թվում՝ եթե պարտավորությունների խախտումը տեղի է ունեցել հավատարմագրային կառավարչի գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման արդյունքում: Ընդ որում, պայմանագրի կատարման ընթացքում հավատարմագրային կառավարչի գործակալի փոփոխման դեպքում հավատարմագրային կառավարիչը գրավոր տեղեկացնում է կառավարման հիմնադրին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

21. Համատեղ գործունեության (կոնսորցիումի) դեպքում մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ կառավարման հիմնադրի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է, և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

22. Հավատարմագրային կառավարիչը, ի ապահովումն պատճառված վնասների հատուցման, որոնք կարող են առաջանալ սույն պայմանագրի ոչ պատշաճ

կատարմամբ, ներկայացնում է *[սալսահովման միջոցը]*, որը կցվում է սույն պայմանագրին՝ որպես 3-րդ հավելված:

23. Հավատարմագրային կառավարչի կողմից ստանձնած պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար կիրառվում է տուգանք պայմանագրի ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով: Տուգանքը հաշվարկվում է նաև պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումը պայմանագրով սահմանված ժամկետներում կատարելու, սակայն կառավարման հիմնադրի կողմից պայմանագրի արդյունքը չընդունելու դեպքում: Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման նպատակով կնքված այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակներում արձանագրվել է ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը: Եթե գնման ընթացակարգը կազմակերպվել է չափաբաժիններով, և ընտրված մասնակցի հետ կնքված պայմանագիրը ներառում է մեկից ավելի չափաբաժիններ, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

24. Հավատարմագրային կառավարչի կողմից ստանձնած պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ պայմանագրի չկատարված մասի գնի 0.05 տոկոսի չափով:

VII. Պայմանագրի փոփոխումը և լուծումը

25. Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել՝ կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել՝ նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը: Ընդ

որում, արգելվում է միննույն բյուջետային տարվա ընթացքում նույն ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերման նպատակով նախատեսել ֆինանսական միջոցներ:

26. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, հավատարմագրային կառավարիչը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո կառավարման հիմնադիրը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, կառավարման հիմնադիրը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով հավատարմագրային կառավարչի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ հավատարմագրային կառավարիչը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով կառավարման հիմնադրի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է: Սույն կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում հսկողություն և (կամ) վերահսկողություն իրականացնող մարմինները, իսկ մյուս դեպքերում կառավարման հիմնադիրն այդ մասին ծանուցում են իրավապահ մարմիններին՝ վերջիններիս և հավատարմագրային կառավարչին ներկայացնելով հիմքերը:

27. Հավատարմագրային կառավարչի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը կառավարման հիմնադիրը հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Հավատարմագրային կառավարիչը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի

լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև հավատարմագրային կառավարչի էլեկտրոնային փոստին:

28. Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, սակայն տվյալ տարում նախատեսված չեն կամ նախատեսված են ավելի քիչ ֆինանսական միջոցներ, քան պայմանագրի գինն է, ապա հետագա ծառայությունների մատուցումն իրականացվում է համաձայնագիր կնքելու միջոցով: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա կառավարման հիմնադրի կողմից համաձայնագիր կնքվում է, եթե հավատարմագրային կառավարչի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները: Ընդ որում, հավատարմագրային կառավարիչը համաձայնագիրը կնքում, իսկ ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները կառավարման հիմնադրին ներկայացնում է համաձայնագիր կնքելու մասին ծանուցումն ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը կառավարման հիմնադրի կողմից միակողմանիորեն լուծվում է:

VIII. Այլ պայմաններ

29. Սույն պայմանագիրը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության իրավունքով: Սույն պայմանագրի առնչությամբ ծագած վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

30. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ առաջացնող գնումների դեպքում պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է այդ գործարքի՝ լիազորված մարմնի կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

31. Հավատարմագրային կառավարիչը պարտավոր է լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել կառավարման հիմնադրին:

32. Սույն պայմանագրով նախատեսված ծանուցումներն ուղարկվում են սույն պայմանագրի 9-րդ բաժնում նախատեսված հասցեներով:

33. Սույն պայմանագրով նախատեսված հավատարմագրային կառավարման ժամկետը լրանալուց առաջ մեկ ամսվա ընթացքում կողմերից որևէ մեկից պայմանագրի դադարեցման վերաբերյալ ծանուցում չստացվելու դեպքում հավատարմագրային կառավարման ժամկետը համարվում է երկարաձգված նույն ժամկետով և նույն պայմաններով, որոնք նախատեսված են սույն պայմանագրով:

34. Սույն պայմանագիրը կնքված է հայերենով, *[օրինակների քանակը]* օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

IX. Կողմերի գտնվելու վայրը, բանկային տվյալները և ստորագրությունները

Կառավարման հիմնադիր

Հավատարմագրային կառավարիչ

[Կառավարման հիմնադրի տվյալներ]

[Հավատարմագրային կառավարչի տվյալներ]

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Է. ԱՂԱԶԱՆՅԱՆ